

Կ-084⁵-02.04.2019-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «հարկադիր կատարման ծառայության» բառերը փոխարինել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ծառայություն)» բառերով.

2) 4-րդ մասում «հարկադիր կատարման» բառերը հանել:

Հոդված 2. 32-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ ծառայություն)» բառերը փոխարինել «ծառայության» բառով.

2) 2-րդ մասում «մասին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև գրավոր համաձայնություն աճուրդում հաղթելու դեպքում աճուրդի հաղթողի անունը, ազգանունը, հայրանունը և հասցեն, ինչպես նաև նրա կողմից ձեռքբերված լոտի գնման գնի վերաբերյալ տեղեկությունները ծառայության կողմից հրապարակելու մասին» բառերը.

3) 4-րդ մասում «ենթակա չեն» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ աճուրդում հաղթողի և նրա կողմից ձեռքբերված լոտի գնման գնի վերաբերյալ տեղեկությունների» բառերը:

Հոդված 3. Օրենքում «հարկադիր կատարման ծառայություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «ծառայություն» բառով և դրա հոլովածներով:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա երկրորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով, անկախ այն հանգամանքից, որ նախորդ աճուրդի մեկնարկային գինը սահմանված է եղել կողմերի առաջարկությամբ: Նույն հիմքերով աճուրդը չկայանալու դեպքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար հարկադիր կատարողի սահմանած մեկնարկային գնի տասը տոկոսի չափով, անկախ այն հանգամանքից, որ նախորդ աճուրդի մեկնարկային գինը սահմանված է եղել կողմերի առաջարկությամբ: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:»:

Հոդված 5. Օրենքի 35.1-ին հոդվածից հանել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման» բառերը:

Հոդված 6. Օրենքի 35.2-րդ հոդվածում՝

1) 5-րդ և 6-րդ մասերում «բանկային» բառը փոխարինել «աշխատանքային» բառով 6-րդ մասում «բանկային» բառը փոխարինել «աշխատանքային» բառով:

2) 7-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հաղթողի կողմից գնման գինը վճարվելուց և այն փաստացի ծառայության դեպոզիտ հաշվին մուտքագրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հարկադիր կատարողը նրա կամ նրա ներկայացուցչի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր:»:

Հոդված 7. Օրենքի 35.4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում հաջորդ հերթում ներառված այլ գույք:»:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպվող աճուրդների նկատմամբ: